	փոխադրեալ	14 ռ. 50 կ.
13.	Ադամ Մինասեան Քալիքեանց . .	2 ռ.
14.	Գրիգոր Մկռեանց	1 ռ.
15.	Գէորգ Պիլիկեանց	1 ռ.
16.	Եղիա Պոլկոմնիկեանց	50 կ.
17.	Բիջոլաշվիլի Յարութիւն . . .	1 ռ.
18.	Յովակիմ Զուայդեան	1 ռ.
19.	Լուսեղէն Եղիազարեանց . . .	1 ռ.
20.	Մկրտիչ Յարութիւնեան Մահտեսեանց .	1 ռ.
21.	Գրիգոր Պետրոսեան Շլթեանց . .	1 ռ.
22.	Յարութիւն Զորչոփեանց . . .	2 ռ.
23.	Վարդան Տէրիմեանց	1 ռ.
24.	Յակոբ Մախաւեանց	1 ռ.
	ընդամէնը	28 ռուբլի

Տ. ԵՂԵԿԻԷԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԸՐՇԱԿՈՒՆԻ

Նոյեմբերի 14-ին հանգեաւ ի Տէր.

Հանգուցեալ Եղեկիէլ Ծ. վարդապետը ծնուել է Վանում 1864 թուին։ Սկզբնական ուսումը առել է Կ. Պոլսում. յետոյ մտել է Երուսաղէմի ժառանգաւորաց դպրոցը, ուր 1888 թուին աւարտելով ուսման ընթացքը, 1889 թ. սարկաւագ և 1892 թ. վարդապետ է ձեռնադրուում։

Երուսաղէմի վանքում մի տարի հիւրընկալութեան պաշտօն է վարում. 1895 թուին առաջնորդական տեղապահի պաշտօնով ուղարկուում է Տիգրանակերտ, յաջորդ տարին գաւառական ժողովից ընտրուում է առաջնորդ և վարում է նոյն պաշտօնը մինչև 1908 թիւը. նոյն թուին աչնանը հրաժարուելով առաջնորդական պաշտօնից գնում

է Երուսաղէմ և կարգւում է Բէրութի հոգևոր հովիւ։ Ներկայ տարուայ սկզբին վերադառնում է Երուսաղէմ, և այնտեղից մեկնում է Կ. Պոլիս բուժուելու շաքարախտից, որով տառապում էր մի քանի տարիներից հետէ։ Այս ամառ ընտրւում է Զարսանջաքի և Զմշկածագի առաջնորդ, և թեմականներից ստանալով եպիսկոպոս ձեռնադրուելու որոշում և Թուրքիոյ Հայոց ազգ. կեսր. վարչութիւնից վկայական՝ սեպտեմբերի 28-ին հասնում է Մայր Աթոռս, երբ արդէն եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ութ օր առաջ կատարուած էր։

Ճանապարհին ուսի վերայ ստացած վէրքից և շաքարախտից ուժասպառ եղած մի քանի օրից անկողին է ընկնում Մայր Աթոռիս հիւրատանը։ Բժշկական հոգ և խնամք ամենայն հոգածութեամբ մատակարարւում են. բայց տեսնելով որ հիւանդի դրութիւնը օր աւուր ծանրանում է՝ Մայր Աթոռիս բժշկի խորհրդով հոկտ. 20-ին տեղափոխւում է Երևանի քաղաքային հիւանդանոցը։ Բժշկական միջոցները անզօր են գտնւում վէրքի ճարակման և շաքարախտի հիւծող հոսանքի առաջքը առնելու, և Տ. Եզեկիէլ ծ. վարդապետ Արշակունի հիւանդանոցում նոյեմբերի 14-ին գիշերը ժամը 8-ին աւանդում է հոգին։

Վեհափառ Հայրապետի հրամանով Վանական Կառավարութեան Նախագահ Տ. Ներսէս. նոյն կառավարութեան անդամ Տ. Արիստակէս և Վեհ. Հայրապետի գաւազանակիր Տ. Մեսրոպ վարդապետները գնում են Երևան և նոյեմբ. 16-ին առաւօտեան, հոգևորական դասի մասնակցութեամբ և պատշաճ յուղարկաւորութեամբ հանգուցելու նշխարը տեղափոխում են Ս. Պետրոս Պօղոս եկեղեցին, ուր պատարագում է Տ. Արիստակէս վարդապետը և օծման արարողութիւնը կատարում է Տ. Մեսրոպ վարդապետը։ Ս. պատարագից յետոյ հանգուցելոյ մարմինը յուղարկաւորւում է դէպի Հայոց նոր գերեզմանատունը, ուր և ամփոփւում է։

Տէր լուսաւորէ հանգուցելոյ հոգին։